

# ՄԻԱՄԱՎԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2017

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմուղ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Զեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարուղում: Պատասխանների ճնարութիւնը ճիշտ լրացնում է կախված Զեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

**1 Ինչի՞ առկայությամբ է մողեսը տարբերվում գորտից.**

- 1) քոքերի
- 2) արյան շրջանառության երկու շրջանի
- 3) լյարդի
- 4) կրծքավանդակի

**2 Որտե՞ղ է ավարտվում թռչունների արյան շրջանառության մեծ շրջանը.**

- 1) աջ փորոքում
- 2) ձախ փորոքում
- 3) աջ նախասրտում
- 4) ձախ նախասրտում

**3 Որտե՞ղ են բացվում միջատների մալայիզյան անոքները.**

- 1) ճարպային մարմնիկի մեջ
- 2) կտնառքի մեջ
- 3) կոյանցի մեջ
- 4) հետնաղու մեջ

**4 Հիդրայի նյարդային համակարգը ներկայացված է.**

- 1) նյարդային շղթայով
- 2) նյարդային բներով
- 3) աստղաձև նյարդային բջիջներով
- 4) նյարդային խողովակով

**5 Ի՞նչ է տեղի ունենում ինֆուզորիայի նյութափոխանակության հեղուկ արգասիքների հետ.**

- 1) հեռացվում են ցիտոպլազմայում գտնվող բջջակլանով
- 2) կուտակվում են հավաքող խողովակներում և հեռացվում արտագատող անցքով
- 3) ցիտոպլազմայից անցնում են հավաքող խողովակներ, ապա կծկվող վակուոլներ և հեռացվում դրանցով
- 4) հեռացվում են ցիտոպլազմայի արտաքին շերտում գտնվող՝ շշիկների նմանվող օրգանիզմներով

**6 Ո՞ր կենդանիներն ունեն փակ արյունատար համակարգ.**

- 1) տափակ որդերը
- 2) օղակավոր որդերը
- 3) միջատները
- 4) աղեխորշավորները

7

Ի՞նչ է կատարվում ներշնչման ժամանակ մարդու օրգանիզմում.

- 1) միջկողային մկանների կծկում
- 2) միջկողային մկանների թուլացում
- 3) ստոծանու մկանների թուլացում
- 4) թռքերի ծավալի փորձացում

8

Ի՞նչ հիվանդություն է առաջանում A վիտամինի անբավարարությունից.

- 1) բերի-բերի
- 2) հավկուրություն
- 3) ցինգա
- 4) ռախիտ

9

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազման դեպքում.

- 1) աճում է ջերմաստվությունը
- 2) մեծանում է արյան հոսքը դեպի մաշկ
- 3) նեղանում են մաշկի մազանոթների լուսածերպերը
- 4) մաշկի արյունատար անոթները լայնանում են, և փոքրանում է արյան հոսքի արագությունը

10

Ինչպես է կոչվում ածխաթթու գազ միացրած հեմոգլոբինը.

- 1) վերականգնված հեմոգլոբին
- 2) օքսիհեմոգլոբին
- 3) կարբօքսիհեմոգլոբին
- 4) կարբոհեմոգլոբին

11

Ի՞նչը չի մտնում մարդու ողի կառուցվածքի մեջ.

- 1) ելունը
- 2) աղեղը
- 3) մարմինը
- 4) զլխիկը

12

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ ադրենալինի քանակի ավելացման դեպքում.

- 1) լայնանում են արյունատար անոթները, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոգեն
- 2) սրտի աշխատանքը դանդաղում է, զլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում
- 3) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը
- 4) արյան մեջ նվազում է զլյուկոզի քանակությունը

**13** Ո՞ր նյութերի մարսման խանգարմանը կհանգեցնի հաստ աղիում գտնվող մանրէների ոչնչացումը.

- 1) գլյուկոզի
- 2) բաղանթանյութի
- 3) ճարպաթթուների
- 4) ամինաթթուների

**14** Ինչպե՞ս է իրականացվում մարդու միզագոյացման հումորալ կարգավորումը.

- 1) մակերիկամի միջուկային շերտի և մակուղեղի հորմոնների միջոցով
- 2) մակուղեղի և մակերիկամի կեղևային շերտի հորմոնների միջոցով
- 3) վահանաձև գեղձի հորմոնների և կալցիումի իոնների միջոցով
- 4) մակերիկամների միջուկային և կեղևային շերտերի հորմոնների միջոցով

**15** Ո՞ր պնդումն է սխալ հեպարինի վերաբերյալ.

- 1) առաջանում է քրոմբոցիտների քայքայման ժամանակ
- 2) արգելակում է արյան մակարդումը
- 3) պոլիսախարիդ է
- 4) առաջանում է լյարդում և ժամանակ առ ժամանակ մղվում է արյան հուն

**16** Որտե՞ղ են գտնվում մարդու պարասիմպաթիկ նյարդային համակարգի կենտրոնները.

- 1) ողնուղեղում, երկարավուն և միջին ուղեղներում
- 2) ողնուղեղում, ուղեղիկում և երկարավուն ուղեղում
- 3) ողնուղեղում և միջանկյալ ուղեղում
- 4) ողնուղեղում և կամբջում

**17** Ո՞ր խմբի արյուն ունեցող մարդկանց օրգանիզմում են սինթեզվում երկու տեսակի՝ A և B ազլյուտինոգեններ.

- 1) չորրորդ
- 2) առաջին
- 3) երկրորդ
- 4) երրորդ

**18** Պլաստիկ փոխանակության գործընթացի օրինակ է՝

- 1) շնչառությունը
- 2) խմորումը
- 3) ֆոտոսինթեզը
- 4) գլիկոլիզը

19

Ո՞ր քիմիական տարրն է մտնում բջջի ուլտրամիկրոտարրերի խմբի մեջ.

- 1) Գտորը
- 2) ոսկին
- 3) յոդը
- 4) մանգանը

20

Որո՞նք են պրոկարիոտներ.

- 1) բակտերիաները
- 2) նախակենդանիները
- 3) սնկերը
- 4) բակտերիաֆազերը

21

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) ԱԵՖ-ի մոլեկուլի կառուցվածքը կայուն չէ
- 2) Յ խմբի վիտամինները լուծվում են ջրում
- 3) Վիտամին A-ն լուծվում է ճարպում
- 4) ԱԵՖ-ը պահեստավորվում է բջջում

22

Աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի բաղադրության մեջ մտնում են՝

- 1) Ο-ՆԹ-և սպիտակուց
- 2) Τ-ՆԹ, Ο-ՆԹ և սպիտակուց
- 3) Τ-ՆԹ և սպիտակուց
- 4) Τ-ՆԹ և Ο-ՆԹ-

23

Ֆուռսինթեզի ընթացքում թթվածին առաջանում է.

- 1) քլորոֆիլից պոկվելու հետևանքով
- 2) ԱԵՖ-ի սինթեզի արդյունքում
- 3) ջրի քայքայման արդյունքում
- 4) ածխաթթու գազից պոկվելու հետևանքով

24

Նշված սպիտակուցներից որը՝ չի կատարում շարժողական գործառույթ.

- 1) Փլազելինը
- 2) ինսուլինը
- 3) ռինեինը
- 4) ակտինը

25

Կորիգակեներում տեղի է ունենում.

- 1) կորիգաթաղանթի ձևավորումը
- 2) ածխաջրերի և լիալիդների սինթեզը
- 3) սպիտակուցների սինթեզը
- 4) ռիբոսումների մեծ և փոքր ենթամիավորների ձևավորումը

26

Ի-ՈՆԹ-ում նույնականացների ո՞ր եռյակն է համապատասխանում ԴՆԹ-ի ԱԹԳ եռյակին.

- 1) ՈՒԱՅ
- 2) ՈՒԱԳ
- 3) ԱՍՅ
- 4) ԱԹՅ

27

Ո՞ր կենդանիների օրգանիզմում է հանդիպում արական հոմոգամետուրյուն.

- 1) թիթեռների
- 2) մարդկանց
- 3) կարնասունների
- 4) դրոզոֆիլ պտղածանձի

28

Ինչպիսի՞ գենոտիպեր են ունեցել ծնողները, եթե այդ ընտանիքում բոլոր տղա երեխաները դալտոնիկ են, իսկ աղջիկները՝ դալտոնիզմի գենը կրողներ են.

- 1)  $X^d X^d$  և  $X^D Y$
- 2)  $X^D X^d$  և  $X^d Y$
- 3)  $X^D X^d$  և  $X^D Y$
- 4)  $X^D X^D$  և  $X^D Y$

29

Ի՞նչ է տեղի ունենում միտոզի անաֆազում.

- 1) սկսվում է ցիտոպլազմայի բաժանումը
- 2) դուստր քրոմոսոմները տարամիտվում են հակառակ քևեռներ
- 3) քրոմոսոմները գրավում են կենտրոնական դիրք
- 4) քրոմոսոմները կրկնապատկվում և պարուղվում են

30

Ինչպես է կոչվում նախակենդանիների քջիջների քազմակի կիսումը.

- 1) սրոհում
- 2) շիզոգնոնիս
- 3) ֆրազմենտացիա
- 4) ռեզեներացիա

31

Ի՞նչ է կոչվում մեկ զույգ հոմոլոգ քրոմոտոմների ավելացումը.

- 1) անեռուպլոիդիա
- 2) պոլիպլոիդիա
- 3) հապլոիդիա
- 4) սրիստմիա

32

Ինչպիսի՞ արդյունք է ստացվում երկինտերոզիզոս առանձնյակի և հոմոզիզոս դրմինանու առանձնյակի խաչասերման արդյունքում՝ երկու ալելներով էլ ոչ լրիվ դրմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 1 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 2) 2 ֆենոտիպային և 2 գենոտիպային խմբեր
- 3) 4 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր
- 4) 2 ֆենոտիպային և 4 գենոտիպային խմբեր

33

Ո՞ր օրգանիզմները պոպուլյացիայի կազմի մեջ չեն մտնում.

- 1) տարբեր տարիքային խմբերի օրգանիզմները
- 2) տարբեր սեռերի օրգանիզմները
- 3) մեկ տեսակին պատկանող օրգանիզմները
- 4) տարբեր տեսակներին պատկանող օրգանիզմները

34

Շղթայակցման բացակայության դեպքում ինչպիսի՞ հարաբերությամբ  $AaBb$ ,  $aaBb$ ,  $Aabb$ ,  $aabb$  գենոտիպով առանձնյակներ կստացվեն, եթե խաչասերվեն  $AaBb$  և  $AaBb$  գենոտիպով առանձնյակներ.

- 1) 1:1:1:1
- 2) 1:2:1
- 3) 3:1
- 4) 4:2:2:1

35

Ո՞ր բույսը մակարույժ չէ.

- 1) օմելան
- 2) ռաֆլեզիան
- 3) գաղաթ
- 4) սարացենիան

36

Ո՞րն է ոչ կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) գիշատչությունը
- 2) մակարուծությունը
- 3) մրցակցությունը
- 4) խոնավությունը

37

Ո՞րն է պարտադիր փոխահավետ փոխազդեցության օրինակ.

- 1) կոռպերացիան
- 2) մուտուալիզմը
- 3) կոմենսալիզմը
- 4) ամենսալիզմը

(38-39) Խաչասերել են  $AaBbCCddEe \times AabbccDdEE$  գենոտիպերով առանձնյակներին:

Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է լրիվ դոմինանտություն, իսկ վերջին երկուտում՝ ոչ լրիվ: Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարբեր զույգերում:

38

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 16
- 2) 24
- 3) 54
- 4) 36

39

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 54
- 3) 16
- 4) 36

40

Ծածկասերմ բույսի առէջներից մեկում առաջացել է 2000000 վոշեհատիկ: Քանի՞  
սպերմիումներ են դրանք պարունակում.

- 1) 2000000
- 2) 4000000
- 3) 500000
- 4) 1000000

41

Ո՞ր օրգանական միացությունը (նշված է ձախ սյունակում) ածխաջրի ո՞ր խմբին  
(նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն  
ըստ հերթականության.

Օրգանական միացություն

- A. խիտին
- B. ֆրուկտոզ
- C. գալակտոզ
- D. գլիկոզեն
- E. գլյուկոզ
- F. թաղանթանյութ

Ածխաջրի խումբ

- 1. միաշաքարներ
- 2. բազմաշաքարներ

42

Բջջի ո՞ր օրգանոիդին (նշված է աջ սյունակում) ո՞ր ֆունկցիան (նշված է ձախ  
սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն  
հերթականության.

Ֆունկցիա

- A. անօրգանական նյութերից օրգանական նյութերի  
սինթեզ
- B. պաշարային սննդանյութերի կուտակում
- C. ժառանգական տեղեկատվության պահպանում և  
հաղորդում
- D. պլազմային թաղանթի նորոգում ու աճ
- E. բոլոր տեսակի սպիտակուցների կենսասինթեզ
- F. մասնակցություն բաժանման իլիկի ձևավորմանը
- G. լիզոսումների ձևավորում

Օրգանոիդ

- 1. Գոլջիի ապարատ
- 2. պլաստիդ
- 3. ռիբոսոմ
- 4. կորիզ
- 5. բջջային կենտրոն

43

Ո՞ր իիվանդությունը (նշված է ձախ սյունակում) մուտացիաների ո՞ր ձևով է (նշված է աջ սյունակում) պայմանավորված: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հիվանդություն

Մուտացիաների ձև

- A. հեմոֆիլիա
- B. Պատառի սինդրոմ
- C. Էդվարդսի սինդրոմ
- D. Մարֆանի սինդրոմ
- E. ալբինիզմ
- F. «մլավոցի սինդրոմ»

- 1. քրոմոսոմային
- 2. գենային
- 3. գենոմային

44

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Մեզի տեսակ

- A. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային
- B. լցնում է երիկամի պազամը
- C. առաջանում է հետադարձ ներծծման արդյունքում
- D. լցնում է նեֆրոնի պատիճը
- E. առաջանում է ֆիլտրման եղանակով
- F. հնում է ծնկածն խողովակով
- G. հնում է հավաքող խողովակով

- 1. առաջնային
- 2. երկրորդային

45

Մարդու մկանային հյուսվածքի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Մկանային հյուսվածք

- A. կազմում են հենաշարժի համակարգի մկանները
- B. ձևավորում է արյունատար անորթների պատի միջին շերտը
- C. կազմված է 10-12 սմ երկարություն ունեցող բջիջներից
- D. կազմված է բազմակորիզ բջիջներից
- E. կազմված է իլիկածն բջիջներից
- F. սպիտակուցային թելիկները դանդաղ են կծկվում

- 1. հարթ
- 2. միջածիզ զոլավոր

46

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը՝ ռեցեսիվ մուտացիաների առաջացումից մինչև նրանց՝ ֆենոտիպում արտահայտվելը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ռեցեսիվ մուտացիայի տարածում
2. ռեցեսիվ մուտացիա կրող գամետների միաձուլում
3. նուկլեոտիդների երկու զույգի փոխարինում
4. ռեցեսիվ մուտացիայի առաջացում
5. ըստ մուտանտ գենի՝ հոմոզիգոտ ձևի առաջացում
6. ռեցեսիվ մուտացիա կրող օրգանիզմում գամետների առաջացում
7. մուտացիայի արտահայտում ֆենոտիպում

47

**Մարդու օրգանիզմում ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում ճարպերի փոխակերպման գործընթացները: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. ճարպերի կուտակում ենթամաշկային բջջանքում
2. ճարպերի ներթափանցում արյան մեջ
3. բարակ աղիների թափիկների էպիթելի բջիջներում օրգանիզմին բնորոշ ճարպերի սինթեզ
4. ճարպերի ճեղքում մարսողական ֆերմենտների ազդեցությամբ
5. ճարպաթրուների և զիցերինի ներթափանցում բարակ աղիների թափիկների մեջ
6. ճարպերի ներթափանցում ավշային մազանորմեր

48

**Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում գրգիռը թքազատության պայմանական ռեֆլեքսի ռեֆլեքսային աղեղով: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. նյարդային ազդակի հաղորդում ժամանակավոր կապով
2. թքազատության հրահրում
3. նյարդային ազդակի հաղորդում շարժողական նյարդով
4. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոնի դրորում
5. տեսողական նյարդով նյարդային ազդակի անցում մեծ կիսագնդերի կեղևի տեսողական գոտի
6. աչքի ցանցաթաղանթի ընկալիչների գրգռում լույսով

49

**Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.**

1. ցանցաթաղանթի ընկալչական բջիջների գրգռում
2. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
3. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
4. աչք թափանցող լույսի քանակի կարգավորում
5. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
6. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
7. տեսողական զգայության ձևավորում

50

**Նշել գորտի օրգանիզմ օղի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների հաջորդականությունը.**

1. օղը թոքերից դուրս է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
2. օղը մղվում է դեպի թոքերը
3. թերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
4. թերանակլանային խոռոչի հատակն իջնում է
5. օղը քթանցքերով անցնում է թերանակլանային խոռոչ
6. փակվում են քթանցքերի փականները
7. թերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է

51

Զկների կառուցվածքին և կենսագործունեությանը վերաբերող ո՞ր պնդումն է ճիշտ։  
Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. ձկների կրծքի և փորի զույգ լողակներն օգնում են շրջադարձեր կատարելուն
2. ողնաշարում տարբերում են երեք բաժիններ՝ պարանոցի, իրանի, պոչի
3. առջևի ուղեղից դուրս են զալիս հոտառական նյարդերը
4. ձկների մարմինը պատված է եղջերային թեփուկներով
5. ձկները բաժանասեռ կենդանիներ են
6. բեղմնավորված ձկներում զարգացող թրթուրը սնվում է մայրական օրգանիզմի հաշվին՝ ամրանալով էգի արգանդի պատին
7. ձկների մեծ մասին հատուկ է արտաքին բեղմնավորումը

52

Նշել միայն բոլոր ճիշտ պնդումները.

1. ոռողիմնենտ օրգանն առկա է տվյալ տեսակի բոլոր առանձնյակների մոտ
2. միամատ ծիերի ի հայտ զալն ատավիզմի դրսնորում է
3. ատավիզմները որոշ առանձնյակների մոտ հեռավոր նախնիների հատկանիշների դրսնորման արդյունք են
4. կառուցվածքով և ծագումով նման օրգանները, անկախ նրանց կատարած ֆունկցիաներից, կոչվում են անալոգ
5. թիթեռի և չղջիկի թևերը հոմոլոգ օրգաններ են
6. վերջույթների մնացորդները ոռողիմնենտ օրգաններ են կույր օձերի և վիշապների մոտ
7. ոլորի բեղիկները, կակտուսի փշերը հոմոլոգ օրգաններ են

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. մակրոէվոլյուցիայի ընթացքում տեղի է ունենում զոյության կրիվ, բնական ընտրություն, ժառանգական փոփոխականություն
2. անալոգ օրգաններ են կարտոֆիլի պալարը և սեզի կոճղարմատը
3. բնական ընտրությունը միշտ ուղղորդված բնույթ ունի
4. էվոլյուցիայի գլխավոր շարժիչ ուժը ժառանգական փոփոխականությունն է
5. բնական ընտրությունը կատարելագործում է հարմարվածությունը զոյության տվյալ պայմանների նկատմամբ
6. շարժական ընտրությունը հանգեցնում է ռեակցիայի նորմայի փոփոխմանը մեկ որոշակի ուղղությամբ
7. կայունացնող ընտրությունը գործում է այն դեպքում, եթե տեղի չեն ունենում մուտացիաներ

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները կենսոլորտում ազոտի շրջապտույտի վերաբերյալ.

1. դենիտրիֆիկացնող բակտերիաները նիտրատները վերականգնում են մինչև մոլեկուլային ազոտ և այն արտազատում են մթնոլորտ
2. բույսերը յուրացնում են հողում գտնվող կապված ազոտը
3. մթնոլորտային ազոտի կապումը իրականացնում են սիմբիոտիկ պալարաբակտերիաները, կապտականաշ ջրիմուները և որոշ ազատ ապրող հողային բակտերիաներ
4. նիտրիֆիկացնող բակտերիաներն ամոնիակը վերածում են ազոտական և ազոտային թթվի աղերի
5. ամոնիֆիկացնող բակտերիաները ամոնիակը վերածում են ամոնիումի աղերի
6. ազոտի շրջապտույտում կարևոր նշանակություն ունի կենդանիների շնչառությունը

55

**Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.**

1. ֆիբրինոգենը կատալիզում է թրոմբինի վերածումը թրոմբի
2. մարդկանց 30-40%-ն ունի երրորդ խմբի արյուն
3. ներզատական գեղձերին են դասվում ենթատեսաթումբը, մակուլելը, ենթաստամոքսային գեղձը, ճարպագեղձերը, մակերիկամները, սեռական գեղձերը
4. յոդ պարունակող հորմոն արտադրում է վահանաձև գեղձը
5. դենդրիտը նյարդային ազդակը հաղորդում է նեյրոնի մարմնին
6. ողնուղեղը գտնվում է ողնուղեղային խողովակում
7. կմախքը կատարում է արյունաստեղծ գործառույթ

56

**Ինչպե՞ս է տեղի ունենում ծաղկավոր բույսերի սեռական քազմացումը: Նշել բոլոր սխալ պատասխանները.**

1. սպերմիումները սաղմնապարկ են հասնում փոշեխողվակի աճի շնորհիվ
2. հասուն սաղմնապարկը պարունակում է վեց հապլոիդ և երկու դիպլոիդ բջիջներ
3. առէջի փոշանոթում միտոտիկ բաժանումների արդյունքում ձևավորվում են միկրոսպորներ
4. սաղմնապարկը զարգանում է հապլոիդ մեգասպորից
5. մի սպերմիումը միաձուվում է ձվարջի հետ՝ առաջացնելով զիգոս, մյուսը վերածվում է էնդոսպերմի մայրական բջիջ, որից զարգանում է էնդոսպերմը
6. ծաղկավոր բույսերի վեգետատիվ և գեներատիվ բջիջները առաջանում են միտոզի արդյունքում
7. հասուն փոշեհատիկը պարունակում է երկու վեգետատիվ բջիջ և մեկ սպերմիում

57

**Նշել բոլոր սխալ պնդումները.**

1. ի տարբերություն ողնուղեղի՝ երկարավուն ուղեղում գորշ նյութը գտնվում է առանձին կուտակումների՝ կորիզների տեսքով
2. ուղեղիկի վնասվելու դեպքում նրա գործառույթները կատարում են տեսաքումքը
3. գլխուղեղը 20 տարեկանում հասնում է իր վերջնական մեծությանը
4. ուղեղաբունը կազմում են երկարավուն ուղեղը, կամուրջը, միջին և միջանկյալ ուղեղները
5. երկարավուն ուղեղում են գտնվում փախման և հազի ռեֆլեքսների կենտրոնները
6. կամուրջում գտնվող կենտրոնները դեկավարում են դեմքի մկանների աշխատանքը, կոպերի թարթումը, արցունքազատումը
7. ուղեղիկը կազմված է երկու կիսագնդերից և դրանք միացնող որդանման գորշ նյութից

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ ռեցեսիվ ալելի, մյուսը՝ հետերոզիգոտ
2. շղթայակցման խմբերի թիվը համապատասխանում է քրոմոսոմների դիպլոիդ հավաքակազմին
3. լրացըության սկզբունքն ընկած է մի քանի ամինաթթուների փոխազդեցության և սպիտակուցի առաջնային կառուցվածքի ձևավորման հիմքում
4. սպիտակուցի սինթեզի ընթացքում ամինաթթուների միջև պեպտիդային կապն առաջանում է ոչբրոտմի գործառական կենտրոնում
5. տրանսլյացիան ժառանգական տեղեկատվությամբ փոխանակվելու ձև է
6. տրանսլյացիան  $\text{Ter}-\text{hg}$  ի-Ռ-Ն-Թ-ի վրա ժառանգական տեղեկատվության փոխանցման գործընթաց է
7. Մորգանի օրենքը վերաբերում է գեների շղթայակցմանը

**Երկրորդային մեզի 2%-ը կազմում է միզանյութը: 2 լիտր երկրորդային մեզի հետ միասին (խտությունը  $1,05 \text{ g /cm}^3$ )՝ քանի<sup>2</sup> զբան միզանյութ է հեռանում օրգանիզմից:**

- (60-62)  $2,2545 \cdot 10^{-12}$  գ զանգվածով բակտերիայի բջջում պարունակվում է 16000 ռիբոսում, որոնց ընդհանուր զանգվածը կազմում է բակտերիայի զանգվածի 3,2%-ը:

- 60 Քանի՞ դալտոն է կազմում մեկ ռիբոսում միջին զանգվածը: Հաշվի առնել, որ 1 դալտոնը հավասար է  $1,67 \cdot 10^{-24}$  գ: Պատասխանը բաժանել 1000-ի:
- 61 Սպիտակուցի քանի՞ մոլեկուլ կա մեկ ռիբոսում, եթե սպիտակուցի միջին մոլեկուլային զանգվածը 25000 դալտոն է և սպիտակուցների ընդհանուր զանգվածը կազմում է ռիբոսում զանգվածի 50%-ը:
- 62 Քանի՞ նուկլեոտիդից է բաղկացած ռիբոսումի սպիտակուցը կողավորող գենը, եթե մեկ ամինաթթվային մնացորդի միջին մոլեկուլային զանգվածը 100 դալտոն է:

63

Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է գաճապուր մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ: Ալիքաձև մազերով և արյան I խմբով տղամարդն ամուսնանում է ալիքաձև մազերով և արյան III խմբով կնոջ հետ: Նրանց առաջին երեխան ուներ արյան I խումբ: Գտնել մոր ֆենոտիպով երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում (արտահայտված տոկոսներով):

64

Գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է  $364 \text{ моль H}_2\text{O}$ , և անքաղածին փուլի էներգիայի կորուստը կազմել է 1960 կՋոու: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200 կՋոու, իսկ ԱՎՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոու/մոլ էներգիա: Զանի<sup>o</sup> կՋոու է կազմում ընդհանուր էներգիան:

- (65-66) Ծանր ֆիզիկական աշխատանք կատարող մարդու արյան մեջ դիֆուզվել է 360 լ թքվածին: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է 1,5 անգամ, օրգանիզմում յուրացվող թքվածնի ծավալն աճել է 25 %-ով, սրտի կծկումների հաճախականությունն աճել է 2, իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտանրված արյան ծավալը՝ 1,5 անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արքուն ժամանակ կատարում է 16 շնչառական շարժում, սրտի բռնրաշրջանի տևողությունը՝ 0,8 վրկ, և մեկ կծկման ժամանակ փորոքն արտանդում է 70 մլ արյուն:

65

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

66

Աշխատանքի լնրացքում քանի՞ մմ<sup>3</sup> արյուն է ատացել մեկ նեֆրոնը, եթե երիկամները ստանում են մեծ շրջան մղված արյան ծավալի 20%-ը:

67

Ֆուռսինթեզի ժամանակ կլանվել է  $3,36 \text{ m}^3 \text{ CO}_2$ : Որքա՞՞ն օրգանական նյութ (գյուկոց) է սինթեզվել այդ ընթացքում (գրամ), եթե 1 մոլ գազը պարունակում է 22,4 լիտր ծավալ:

68

Չերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է ջերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ ջերմության 20%-ը: Օրվա ընթացքում ջերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 735 կՎ էներգիա, իսկ մարմնի մակերեսը  $2 \text{ m}^2$  է: Քանի՞ միլիգրամ քրտինք գոլորշիացավ մաշկի  $1 \text{ m}^2$  մակերևույթից, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է  $2,45 \text{ կՎ}$  էներգիա:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից նեկը.

1. հյուսվածքային հեղուկի ծավալը 6-7 անգամ գերազանցում է արյան ծավալը
2. օրվա ընթացքում երկու մեծ ավշային ծորաններով արյուն է վերադառնում 2-3լ ավիշ
3. ավշային անոթների ճանապարհին գտնվող ավշային հանգույցներում ձևավորվում են լիմֆոցիտներ և թրոմբոցիտներ
4. ավշային մազանոթները կույր ծայրով սկիզբ են առնում միջքջային տարածությունից
5. ավշային մազանոթները միանալով առաջացնում են խոշոր անոթներ և երկու մեծ ծորաններով բացվում են լյարդի դոներակի մեջ
6. հյուսվածքային հեղուկն առաջանում է, երբ արյան պլազմայի մի մասը նրանում լուծված սննդանյութերի հետ միասին մազանոթի պատով թափանցում է միջքջային տարածություն

70

Օվոգենեզի վերաբերյալ տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Չգիտեմ» պատասխաններից նեկը.

1. 1n2c հավաքակազմ ունեցող խոշոր բջիջը կոչվում է երկրորդ կարգի օվոցիտ, իսկ փոքր բջիջը՝ ուղղորդող մարմին
2. երկրորդ կարգի օվոցիտի երկրորդ բաժանումը մեյոզի ընթացքում կանգ է առնում այրոֆազում և շարունակվում է մինչև վերջ միայն ձվազատման պահին
3. առաջին կարգի օվոցիտներն ունեն քրոմոսոմների 4n4c հավաքակազմ
4. ձվարանների բազմացման գոտու 2n2c հավաքակազմով բջիջները կոչվում են օվոգոնիումներ
5. առաջին կարգի օվոցիտը միտոզով կիսվելով՝ վերածվում է երկրորդ կարգի օվոցիտի
6. մեյոզի առաջին բաժանումից առաջանում են երկու անհավասար հապլոիդ բջիջներ